



## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԻՆ. ՏԱՐԻ 1911

Տարեկան 16 ֆր. ոսկի — 6 ռբ.:  
 Անցանկայ՝ 8 ֆր. ոսկի — 3 ռբ.:  
 Մեկ թիւ կ'արժէ 1-50 ֆր. — 70 Կ.:

Թիի 9, ՍԵՊՏԵՄԲԵՐ

### Պ Ա Յ Մ Ա Կ Ա Ն

#### ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿԱՆԱԿԱՆ ԿԱԳԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՅՈՒՆ



Եր ազգի պատմութեան համար Մամիկոնեան տոհմի ծագման ինչկերթերեւ աւելի կարեւորութիւն ունի քան ընդունուած է կարծել. եւ իսկապէս այս նշանաւոր ցեղի ծագման մասին եղած աւանդութեան ետեւ թագընուում է մի այլ, աւելի ընդհանուր բնոյթ ունեցող մի ինչիր. դա Հայաստանի մէջ եղած հնդիկ-արիական գաղութների ինչիրն է:

Սա կը ցանկայի միայն ցոյց տալ որ Մամիկոնեանց Հայաստան գալն էլ մի

եղելը է արիացի եկուորների պատմութիւնից:

Փաւստոս Բիւզանդի, յորենացու<sup>1</sup>, Սերէոսի<sup>2</sup> եւ այլոց ասածներից երեւում է որ Մամիկոնեանները եղել են մեր երկիրը Ճենաստանից եւ որ այդ Ճենաստանը կամ այժմեան Ղինաստանն է կամ, առնուազն, նրա մի մասը: Սթէ ուզինանք քննել պատմիչների աւանդածը այս մասին նախ եւ առաջ հարց կը ծագէ. կարո՞ղ էին արդեօք Մամիկոնեանների նախնիքը գալ Ղինաստանից թէ ոչ: Դորան միայն մէկ պատասխան պէտք է լինի. այո՛, կարող էին եւ ահա ինչու: Ղինացիները ծանօթանում են հեռաւոր աշխարհներին քրիստոնէական դարեջրանից շատ առաջ: Դեռ Բ. դարին (Մ. Ջր.) նրանք զիտէին Ատրիքի եւ Միջագետքի գոյութեան մասին. ըստ ենթադրութեան Պարկերի<sup>3</sup> եղել են նոյնիսկ այդ երկիրները այցելող շինացիներ: Սոյնպէս ծանօթ է եղել նրանց եւ Բակտրիան: Հնդկաստանի վըլայով Բակտրիա եկած

<sup>1</sup> Բ., 81:

<sup>2</sup> Ըստ Պետեր. հրատ.:

<sup>3</sup> Պարկեր «Ղինաստան», էջ 36—37 ըստ առ.:

Թարգմ.:

ճանապարհորդ Չժան-Յեանը տեսել է այն-տեղ իրա երկրից բերած ապրանքներ: Դա նշանակում է որ Չինաստանի եւ Բակտրիայի միջեւ եղել են քիչ թէ շատ կանոնաւոր յարաբերութիւններ: Հռոմէակցիների հետ էլ չինացիները յարաբերութիւններ են ունեցել Բրիտանիական ժամանակաշրջանից առաջ: Հռոմէակցիները, ըստ վկայութեան Պլինիոսի՝ ստանում էին Չինաստանից մետաքս, երկաթ, մորթ եւ այլն<sup>1</sup>: Յամաքով ուղարկող ապրանքը անցնում է եղել Պարթեւաստանի վրայով, Պարթեւներին մեծ շահ տայով: Ըստ պ. Գիրտի<sup>2</sup> պարթեւական մայրաքաղաքից եղել է մի կանոնաւոր ճանապարհ, 1600 անգլիական մղն երկարութեամբ, որ տանում էր դէպի Չինաստանի սահմանները: Սակայն թէ Բակտրիան եւ թէ նրա սահմանակից երկրները ստանում էին Չինաստանից եւ շրջականներից ոչ միայն ապրանք, այլ եւ գաղթականներ: Անվերջ խառնակութիւններ եւ պատերազմներ ստիպում էին Չինաստանի բնիկ եւ այլազգի բնակիչներին ապաստան գտնել ուրիշ երկրների մէջ: Խիւնգունների (Հոնների) անդադար յարձակումները չինական գաւառների վերայ, այն հետեւանքն ունեցաւ, որ այնտեղ բնակող բազմաթիւ ցեղեր հեռացան իրենց հայրենիքից: Չինական աղբիւրներ՝ ի միջի այլոց՝ հազորդում են որ Բրիտանից առաջ 165 թուին<sup>3</sup> սկսուել է գաղթը այն ցեղերի, որոնք եւրոպացիներին յայտնի են հնդկակիւթացի ընդհանուր անունով: Այդ ցեղերի մեծ մասը եղել է ծագումով տուրանեան: Նախ հաստատուելով հնդկակաֆղանական սահմանազրիխի վերայ, նոքա ապա հիմք դրին հնդկակիւթական կոչուած պետութեան, որի գոյութիւնը, սակայն, երկարատեւ չեղաւ: Քանի որ գաղթականների հոսանքներ հասնում էին մինչեւ

Պարթեւաց երկիրը, զարմանալի չէր լինի եթէ նրանք մտնէին եւ Հայաստան: Դնչպէս կը տեսնենք, իրօք այդպէս էլ եղել է: Այս ի նկատի ունենալով՝ հիմք չէ մտնում եմԹաղբերու որ Խորենացին եւ ուրիշները չփոթած լինէին Ծնեքրին Ծաների կամ մի այլ մտտակալ ժողովրդի հետ: Թերեւս տարօրինակ թուի եթէ ասեմ որ “Ծնեստան», եւ “Ծնն», անուաների միջոցով կարելի է պարզել Հայաստանի եւ Չինաստանի սկզբնական յարաբերութիւնների ժամանակը: Սակայն այդ այդպէս է: Բանն այն է որ Չինաստանը մշտական անուն չուներ<sup>1</sup>:

Երկիրը անուանուած է այնպէս, ինչպէս եւ թագաւորական Տուներ: Թագաւորող հարստութիւնը փոխուելով՝ փոխուած է թէ երկրի եւ թէ ժողովրդի անունը: Այս պատճառով այն ժողովուրդները որոնք ծանօթացել էին Չինաստանին Յին Տան իշխանութեան ժամանակ Չինաստանը կոչում են Յին կամ Chine, Cina, Յոյնպէս ուուաներին չինաց երկիրը յայտնի է որպէս КИТАЙ (Կիտայ), Կիբան Տան անունից: Անալոգիայով բնական կը լինէր նեթարել որ հայկական Ծնք, Ծնաստանն եւս պէտք է կապ ունենայ նման անուն կրող իշխանական մի Տան հետ (անկախ այն բանից թէ այդ Տուներ ամբողջ Չինաստանի վերայ իշխանութիւն ունէր թէ նրա մի մասի վերայ միայն): Իսկպպէս էլ եթէ ուշադրութիւն դարձնենք չինական աղբիւրներին, կը տեսնենք որ այդ երկրում երբեմն գոյութիւն է ունեցել զին կոչուած թագաւորական մի հարստութիւն: Բրիտանիական դարեշրջանը սկսուելուց հինգ դար առաջ Չինաստանում եղել են 124 աւատական իշխանութիւններ, որոնցից 15ը համարուած էին առաջին կարգի ամենահզօր եւ անուանի. Այս 15ից մէկը

<sup>1</sup> Անք.  
<sup>2</sup> Պարկեր, 104:  
<sup>3</sup> Larousseի մեծ բառարան, Indo-Scythes.

<sup>1</sup> Монахъ Іаковъ „Собрание свѣдѣній о народѣхъ, обитающихъ въ ороди. Азіа въ древнія времена“, Երևան:

եղև է թէն կոչուող հարստութիւնը, յՍէնան նահանգի մէջ<sup>1</sup>։

Ուրեմն մեր նախնիքը ժնաստան ստեղծ հասկանում էին շինական այն նահանգը, որի մէջ իշխել է մեն հզոր Տոււնը։ Բնական է եմտարքել որ հայրը ծանօթացել են Ձինաստանին հէնց մեն Տան հպատակների միջոցով։

Գ. դարում (Մ. Բր.) Յին հզոր հարստութիւնը, յաղթելով աւատական բոլոր իշխաններին, հաստատեց միապետական կազմ<sup>2</sup>։ Թերեւս այդ լինի պատճառը որ Մամիկոնեանները նախնիքը, մեն Տան իշխանները, գահն ու կողաւածները կորցնելով՝ ստիպուեցան փախել դէպի հեռու երկիրներ (չորս մասին սես ստորեւ)։ Բայց կան եւ ուրիշ ցուցմունքներ, որոնք հաստատում են որ Մամիկոնեանները եղև են մեն հարստութեան շառաւիղ։ Մովսէս Պարենացին երկարօրէն պատում է Մամգունի մասին, Ստեփան Օրբէլեանն էլ, նոյնպէս եւ Վրաց աւանդութիւններն ու յիշատակացանները մանրամասն նկարագրում են Օրբէլեանների ճննացի նախնիների արտաքինը՝ հասակը եւ այլն։ Սակայն եւ ոչ մէկը ոչ մի բան չէ ասում որ ճննացի գաղթականները ունենային մանգոյական տիպ։ Մինչդեռ եթէ Մամգունը կամ առաջին Օրբէլեանը ունենային մանգոյական տիպ, դա չէր կարող չզարմացնել հայերին ու վրացիներին, որովք սովոր չէին տեսնել մանգոյական աչքերի ու գանգի տարօրինակ ձեւը։ Ընդհակառակը, նկարագրութիւններից երեւում է որ Մամիկոնեաններին եւ Օրբէլեաններին նախնիքը եղև են կամ արի կամ արիւնների նման մի ցեղից եւ կարել է հաստատել որ Մամիկոնեանները Ձինաստանի սահմաններից լինելով հանդերձ, չեն եղել մանգոյ չինացի։ Այդ հանգամանքը չէ հակասում մեն Տան մասին իմ ա-

սածին, վան զե թէն Տոււն էլ մանգոյ ցեղից լէր։

Այստեղ աւելորդ չէ լինի փոքր ինչ շեղուել մեր թեմայից եւ ասել մի քանի խօսք Հնդկաստանում եւ Ձինաստանում ընկող արիւնների մասին։ Ոնչպէս երևում է հնդկական արագուն դրեքից, արիւնները եղև էին Հնդկաստան հիւսիսից։ Սոցա հայրենիքը Այրիանա-Վաւզոն էր, ինչպէս ենթադրում են այն երկիրը, որտեղից սկիզբն են առնում Ռջսոս եւ Եսապորս (Ամու-Դարիս եւ Սըր-Դարիս) գետերը։ Որտեղ երկրից դուրս գալով՝ արիւնները ցրուեցին այս ու այն կողմը՝ բռնելով ահապին տարածութիւններ։ Մի մասը զնաց Սրան, երկրորդը՝ Արաւ-Կասպեան տափարակը (Տուրան), երկրորդը՝ Հնդկաստան<sup>1</sup>։ Սրանում նրանք՝ սեմականների հետ խառնուելով՝ հիմնեցին բակտրիական պետութիւնը (մեր զարեշտանից 1400—1500 տարի առաջ)։ Հնդկաստան անցնող մասը առաջ բնակութիւն հաստատեց Պենջաբում, յետոյ տարածուեց ամբողջ հիւսիսային Հնդկաստանի մէջ, այնուհետեւ էլ գաղթականները ուղարկեց դէպի Դեկան (հարաւ. Հնդկ.)։ Սակայն արիւնները անզոր եղան յաղթելու Դեկանում բնակող սեւամորթ ցեղերին։ Հաւանական է որ հէնց այս անցաջողութիւնից յետոյ է որ նրանք՝ արիւնները՝ ստիպուեցան ուրիշ տեղ ընտրել ու հաստատուեցին Հնդկաստանին սահմանակից շինական նահանգների եւ արեւելեան թուրքեստանի մէջ։

Ձինաստանում արիւնները՝ կամ աւելի ճիշտն ասած՝ արի-հնդիկները՝ բնակում էին Պու-րեյ եւ Պու-նան նահանգների մէջ (հարաւ. Ձինաստան), եւ յայտնի էին Սան («հարաւային այլազգի») ընդհանուր անունով<sup>2</sup>։ Այս տողովուրդների հետքերը

<sup>1</sup> Անգլ. допотопи въ предвѣдоміи, էջ XX եւ հետեւ...  
<sup>2</sup> Անգլ.

<sup>1</sup> Бар. Исхаръ «Превия окаязія», էջ 132 եւ հետեւ...  
<sup>2</sup> Յակոբ. Превиядоказовіе, էջ V.

նկատերի են նաեւ Պամիրում ու արեւելեան Թուրքեստանի մէջ: Նորա ունեին իշխանական հարստութիւններ: Այդ հարստութիւններէց մէկը՝ ամենահզօրը Ղին կոչուող Տունն էր, որի մասին արդէն խօսել եմ: Ծները թէեւ հարաւային իշխաններ էին, սակայն յաջողեցան անցնել կենտրոնական Չինաստան եւ այնտեղ իշխել: Իրանց նստատեղի եղաւ Մենան նահանգի՝ Ծեն-ճժէու քաղաքը: Հին եւ հզօր ցեղ էր Ծենաց ցեղը: Նա սերունդ էր Եուն (Шунь) թագաւորի, որի պայազատներէց մէկը ամուսնացաւ Վու-Վահ հզօր թագաւորի աղջկայ Հետ (մեր դարերջմանից մօտաւորապէս 1130—1150 տարի առաջ), ստացաւ մի գաւառ (Ծեն գաւառը) եւ հիմնադիր եղաւ Ծեն Տան<sup>2</sup>: Այդ տոհմից թագաւոր եղան 24 հոգի (644 տարուայ ընթացքում): Տոհմի գլխաւորը՝ նահապետը կոչուում էր Սու-Գուն Ման, Գույ (Гуй) յորջորջմամբ: Եթէ այս ամբողջը թարգմանենք, կը ստանանք «մերուքաւոր առաջնակարգ իշխան», հարաւային պլազդի Գույ»,<sup>3</sup> Գուն-Ման (Մանաց իշխան) եւ Մանգուն կամ Մամգուն արդեօք նոյնը չէ: Կայ մի հանգամանք եւս որ ստիպում է ինձ՝ Մամիկոնեաններին ճենական Մանգունների սերունդ համարել:

Միգրիայի Մերձովեան (Приморская обл.) նահանգի մէջ ներկայումս էլ գոյութիւն ունի Մանգաւ կոչուող ցեղը (նոյն եւ Օլէի): Այդ ցեղն աղբարք Ծենաց հարստութեան հետ կասկածից դուրս է: Նորա պահպանել են արդեւեւ ծագման նշաններ (տես «Энциклопедич. Словарь Врокгауза и Эфрона» (Мангуя): Դա

<sup>1</sup> Չինաստանի կենտրոնը՝ խէ-նան նահանգն էր. Իրանից դեպի հարաւ գտնուում էր խու-բէյ մեծ նահանգը, իսկ առեւի ճեուու գեղի հարաւ՝ խու-նան: <sup>2</sup> Չեն Տան մասին՝ Գաւիթի, ԺՈՒՍՏ. ԿՅ թր. ԸՄՅԻ. XXIII. <sup>3</sup> Խու-չիւորեն նշանակում է մերուք: — Ման ընդհանուր անուն էր հարաւ. պլազդիների — Գուն ստիպում էր որ կրում էին առաջնակարգ իշխաններ:

գլու քիչ է. արծիւր այնպէս են պատուում, որ նոյա Բուր Կնէրի առջեւ ցոյսած են արծիւնէր՝ երկայն ձողերի վրայ: Այսպէս տեսնում ենք որ Ծեն հզօր հարստութեան սերունդը թէեւ բաժանուած երկու մասի՝ սակայն եւ այնպէս ունի երկուսին էլ յատուկ գծեր. ընդհանուր ծագում (հնդիկ-արիական), ընդհանուր անուն (Մանգուն եւ Մամգուն-Մամիկոնեան), ընդհանուր դրօշ (արծիւ):

Անկարելի է որոշել Մամիկոնեանց գաղթականութեան ճիշտ ժամանակը: Խորհուսցին ցոյց է տալիս երրորդ դարի (Յ. Քր.) վերջը, Սերէտը (առեւի ճիշտն ասած Անանուրը)՝ նոյն դարի կէսը: Ո՛չ այս է ճիշտ, ո՛չ էլ այն: Առաջին Մամիկոնեանը, որի մասին յիշում են մեր պատմիչները՝ Արտաւազդն է: Սա եղել է «սպարապետ ամենայն զօրաց Հայոց [Մեծաց], «տէր հետեւակալգորու եւ պրեւէից», «նախարարապետ»<sup>4</sup>, եւ այլն: Նորա մասին յիշում են Ագաթանգեղոս, Փաստոս եւ արարական «Ագաթանգեղոսի հեղինակը, իսկ Մովս. Խորենացին անուսնում է նրան Մանգակունի»<sup>5</sup>: Արտաւազդի որդու՝ Վաչէի մասին Փաստոսը ասում է, որ նա եղել է «յազգէ սպարապետութեան Հայոց», եւ «բուն սպարապետ»<sup>6</sup>: Այսպէս ասողն անշուշտ ի նկատի ունի որ Վաչէից առաջ գոնեայ 2—3 սերունդ եղել են սպարապետ: Եթէ որդու մասին ասում են որ նա է «յազգէ սպարապետութեան», դա կը

<sup>1</sup> Երեւել տեղ: <sup>2</sup> Արծիւ՝ երբեւ Մամիկոնեանների տոհմիցն դրօշ՝ Փաստոս 68 եւ 260 (ըստ 1899ի հրտ.): նոյնպէս Գուից քանակները: <sup>3</sup> Н. Марр «Крещение армян, грузинк . . . .» էջ 118, 128, 137. <sup>4</sup> Խոր. II, 76: Անցողիկ ասեմ որ Մանգակունիներն եւս կարող էին նոյնպէս Մաներից (հնգկական արիներէրց) լինել. Մեն-Դա «Դա» չիններէն՝ մեծ) -Գուն եւ Մաների մեծ իշխան: նոյա կալուածներն էլ Տարսուսէ կին: <sup>5</sup> Փաստոս, 1899ի հրատար., էջ 9: <sup>6</sup> Փաստոս էջ 20.

նշանակէ որ ոչ միայն հայրը, այլ եւ մեծ հայրը նոյն պաշտօնն ունէին: Ուրեմն Մամիկոնեան ցեղից առաջին սպարապետը՝ Արտաւազը չէր, հետեւապէս նա ոչ էլ առաջին Մամիկոնեանն էր: Պէտք է դարբրի խորերը երթալ: Օտար պատմիչներից գիտենք որ 68—67 թուերում (Մ. Բր.) Տիգրանակերտի պաշտպանների գլխաւորը՝ Մանկայ (Μαγκαιος) զորապետն էր<sup>1</sup>: Այս անունը մտածել է տալիս, արդեօք նա չէր կարող Մամիկոնեան լինել (նոյնն ենթադրում են Արնոյն „Арменія въ эпоху Юстиніана“, էջ 415 եւ Գր. Խալաթեան „Очеркъ истории Арменіа“, էջ 183): Կարելի է հաստատել որ Մանկայը եթէ չէ էլ երկ Մամիկոնեան, գոնեայ պէտք է նրանց ազգակից Մաներից լինէր (Ման ժողովրդի անուն եւ Կայ = Գույ?): Մակայն կասկածից զուրս է որ 51 թուին (Մ. Բր.) յիշուող<sup>2</sup> հայ-պարթեւ զորքի սպարապետը Վասակ<sup>3</sup> եղել է Մամիկոնեան, նոյն ցեղիցն էր անտարակցայ եւ այն սպարապետ Վասակը որ բանակցութիւններ է վարել յաղթուած Հռովմէացիների հետ 61 թուին (Յ. Բր.)<sup>4</sup>: Թէ անունը՝ Վասակ՝ որ պատահում ենք զխաւորարար Մամիկոնեանների մէջ եւ թէ պաշտօնը՝ սպարապետ՝ շատ պարզ ցոյց են տալիս այս երկու զորավարների ծագումը: Հետեւապէս բաւականաչափ հիմք կայ կարծելու որ Ճեն տոհմը եկել է Հայաստան ոչ ուշ քան Գ դար Մ. Բր.<sup>5</sup>:

Ճենաց թագաւորութեան անկումը վերաբերում է ըստ իմ հաշուի՝ Մ զարին Մ. Բր.<sup>1</sup>: Սակայն ձեռները չլնաստեւելով՝ նորից կարողանում են պատուաւոր տեղ գրուել: Մոցա նահապետի որդի Վանը՝ Յի երկիրը փակելով՝ հաստատուում է այնտեղ եւ փոխում է իր անունը՝ դառնալով Տիեան: Վանի թոռան թոռը՝ Վու-Միի մեծապէս զօրանում է, իսկ Վու-Միի որդի Տիեան-Մէն՝ իշխան Մուան-Գուհից գահը խլելով՝ ինք զառնում է Յիի թագաւոր: Մորա յաջորդները տիրում են Յիին 158 տարի, ընդ ամենը լինելով 7 թագաւոր<sup>2</sup>: 223ին (Մ. Բր.) ձեռները նորից սոսկալի հարուած են ստանում եւ ընդմիշտ հեռանում են քաղաքական ասպարէզից: Ղինաստանի բոլոր թագաւորութիւնները տեղ են առլիս յաղթական Յին հարստութեանը, որն եւ հաստատում է միապետութիւն<sup>3</sup>: Ճեներն, հետեւապէս, կարող էին փակել զայ մեր երկիրը կամ Մ դարում, երբ նրանք թագաւորութիւնը կորցնելով առհասարակ ջրուեցին, կամ Գ դարում (Մ. Բր.), երբ իրանց մնացորդները (այսինքն Յիի թագաւորները) նորից յաղթուեցին եւ ջրուեցին: Ինչ այնպէս է թուում, սակայն, թէ ձեռները երկրորդ անգամ յաղթուելուց յետոյ էլ որոշ ժամանակ Ղինաստանում մնացին ապրելով Յիների տիրապետութեան տակ եւ նոցա “եղբայր”<sup>4</sup> համարուելով (չինացիներն սովորութիւն ունէին՝ իբրեւ հաշտութեան պայմաններից մէկը՝ իրենց համար իրաւունք խնդրել

1 Χαδατγανη „Очеркъ истории Арменіа“, 193:  
 2 Տիգրանակերտի նրամնատարին՝ Μαγκαιος անունը (յամի 68 Ն. Է.) Կը յիշէ Եպիփանոս Միհրիստ. Պատերազմ. գլ. 84:  
 3 Xan., էջ 229—230:  
 4 Տակեա. 16, 14:  
 5 Աբրիան, Ac. ԳԼ. Alan, 12 (ազ. Müller 251, 16):  
 6 Էնթազընը կարելի է որ Արտաւազը իրաւունքած խոշոր ժողովրդականների եւ Տրգատի

կեանքը ապաստելու համար ստացած լինի Տարօնի մի մասը եւ զա իբրեւ հիմք ժողովրդի խորեացոյ՝ Մամիկոնեանների Տարօնում հաստատուելու զրոյցի համար:  
 1 Եսկինթ, ժու. ք. թրքչեմ, XXV.  
 2 ԱՅԳ:  
 3 Եսկինթ, 21:  
 4 Համեմատիք խորեացու “զոյրեկորդիքը” Բ., 81:

յաղժողը «եղբայր» համարուելու<sup>1</sup>: Բայց դեռ յոյսը չկորցնելով նախնեաց երկրին նորից տիրանալու՝ նորա մանանկացեցին այն մեծ ապստամբութեանը, որ տեղէ ունեցաւ Բգարուժ (Ն. Բր.)<sup>2</sup>: Այս անգամ էլ, սակայն Յինըրը յաղժող հանդիսացան եւ զսպեցին խռովարարներին: Ահա, ըստ երեւութին, այս վերջնական պարտութիւնից յետոյ է, որ Ընն սոհմի մի մասը իրենց չքրպպատողներով ծանապարհ ընկաւ դէպի հեռու երկիրներ: Ազգային պատմիչներից երեւում է որ ձեները եկան նախ Բահլ<sup>3</sup> եւ սիրալիր ընդունելութիւն գտնելով՝ մտադիր էին այնտեղ հաստատուել, բայց դիւանագիտական բարդութիւնների պատճառ լինել չուզենալով՝ ապա անցան Հայաստան: Այս ժամանակիցն է որ սկիզբ է առնում Արշակունիների եւ Մամիկոնեանների բարեկամութիւնը: Արշակունիները լաւ հասկացան որ աւելի ձեռնուտ է Մամիկոնեանների հետ բարեկամ մնալ քան թշնամի: Չէ որ ձեները անուանի եւ ազգեցիկ սոհմից էին եւ նրանց սիրաշահելով, Արշակունիները իրենց կողմն էին գրաւում Պարթեւաստանի եւ Հայաստանի մէջ բնակող բազմաթիւ հնդկ-արի գաղթականների համակրութիւնը: Այս է պատճառը, որ Պարթեւութեաւորները՝ թէեւ ստիպուած էին բարդութիւններից ազատուելու համար հեռացնել ձեներին իրենց երկրից՝ այնուամենայնիւ շարունակում էին հովանաւորել:

Ո՛ւր հաստատուեցին Մամիկոնեանները, Հայաստան գալով: Յայտնի է որ նրանց գլխաւոր կայրածինները գտնուում էին Տայքում եւ Տարսուտ: Գևորգա-

սութիւն պէտք է տալ Տայքին. հաւանականագոյնս այս նահանգի մէջն էին բնակութիւն հաստատուել անուանի եկու որները եւ ահա ինչու:

1. Ըստ Սեբեոսի եւ Ղոորենացու ձեների բնակութեան համար ընտրուած է եղել «եղբ երկիր», Տարակոյս չկայ որ «եղբ երկիր» ասելով աւելի շատ Տայքը պէտք է հասկանալ քան Տարսն, վասն զի Տայքն էր Հայաստանի ամենահեռու որ նահանգը՝ Պարթեւաց երկրի նկատմամբ:

2. Մամիկոնեանների ազգակից Օրբէլեանները հաստատուել էին Գուգարքում, այսինքն Տայքին սահմանակից մի նահանգի մէջ:

3. Թէ Տայքի եւ Թէ Գուգարքի մէջ շատ զօրուոր է եղել հնդկ-արիական տարրը: Միայն այդ տարրի ներկայութեամբ է որ կարելի է բացատրել Տայքի եւ Գուգարքի շատ գաւառների անունները փոք (որ է սանսկրիտերէն՝ քաղաք)<sup>1</sup> վերջաւորութեամբ (Տես Эминъ „Ивсл. и ста-тъя“, 78): Ոչ միայն Հայաստանի, այլ եւ չքրպպայ երկրների մէջ այժմ էլ բնակում են մի շարք ցեղեր, որոնց ծագումը կապ ունի Մամիկոնեանների եւ առհասարակ հնդկ-արի գաղթականների հետ<sup>2</sup>: Բուրլը

<sup>1</sup> Հայաստանի մէջ այս եւ այն կողմ պատահում ենք աշխարհագրական անուններ, որոնց կապը Հնդկաստանի եւ սահմանակից երկրների հետ ակնհեւ է: Օր. համար՝ Բաշէ եւ Մանանգի անունները ցոյց են տալիս որ Հայաստանում եղել են Մանդիեր եւ Քաշէներ՝ Պարսից եւ Քաշարից գաղթած հնդկաբնիկներ: <sup>2</sup> Հայաստանում եղել են, ինչպէս կարելի է կարծել (եթէ մոյն հաւաստեք Ձեռքը Գլախին), եւ սեւ հնդկներ: Կոնիդեա Վարդանէ ցեղը, Վարդանէ զեար (Կուբակ), Վահանդան լեռնաշղթան (Սուրամի լեռնաշղթայի շարունակութիւնը), Վարդանէ գիւղաբաղաբը: Սեւ ծովի ափին՝ բարդ այդ անունները ցոյց են տալիս որ մեր երկրում եւ շրջակներում ամենուրեք ցրուած են եղել ցեղեր, որոնց համար Պարսը մի գաւառի հնչելն չէր (Վահան, Վարդանէ՝ Պարսեան աշխարհագրական անուններ են, նորա մասին ստորել):

<sup>1</sup> Յակնիթ, յաւաքարան: <sup>2</sup> Յակնիթ, մասն Ա: <sup>3</sup> Ըստ երեւութին Պարսից վրայով, վասն զի ուրիշ էր ամենայարմար ճանապարհը:

Մանգուրներ եւ Մովկացիք<sup>1</sup>, Օս Մամի-  
սոնցիք<sup>2</sup> եւ այն սանր ժողովուրդներ արդեօք  
դորա լաւաբոյն ապացոյց չեն: Անգղու-  
շուխիւն կը լինէր, ի հարկէ, ասեւ, որ  
Մովկացիք, Մամիսոնցիք եւ այլք<sup>3</sup> Մամի-  
կոնեանները սերունդ են: Բայց պէտք է  
յիշեւ որ Մամիկոնեանք, ինչպէս եւ  
Օրբէլեաններ, Հայաստան եւ Վրաստան  
գալով, իրենց հետ բազմաթիւ զինակիր-  
ներու ծառաներ ունէին: Եթէ վրացական  
աւանգուժեան հաւատանք (տես Առ-  
բինօվի ձեռագիրների հաւաքածուն) Օր-  
բէլեաններն իրենց հետ ունէին 5000 զե-  
նուոր: Մամիկոնեաններն էլ գաղթեւ էին  
“ամենայն աղելուն”<sup>4</sup>: Արդեօք Մամիսոնցիք,  
Մամիսեզներ եւ այլ ցեղեր չեն կարող  
Մամիկոնեանների եւ Օրբէլեանների շքամբի  
ու զօրքի սերունդ լինել: Աւելորդ չէր լինի  
շեշտել որ Մամիսոնցիք (Օս) մեր դարեջրանի  
առաջին դարերին բնակելիս են եղել Լա-  
զիկայում<sup>5</sup>, այսինքն այն երկրում, որից  
հետո չէր Մամիկոնեանների սկզբնական  
բնակատեղին:

Մախ քան վերջացնել թոյլ եմ  
տալիս ինձ մի քանի խօսք ասել այն  
անունների մասին, որոնք, իմ կարծիքով,  
կարող են աւելի եւս լոյս ավելել Մամիկոնեան-

ների (եւ նոցա հետ մասամբ՝ Օրբէլեանների)  
ծագման վերայ:

Այնտեւ է որ Մամիսոն (Մանգուն)  
ոչ թէ որոշ անձի անուն է, այլ այսպէս  
կոչուում էր Ճենաց Տան ամեն մի նահա-  
պետ, վասնզի դա տիրոջն է ու նշանակում  
“Մանաց իշխան”: Սեբէոսի յիշած “Ման  
եւ Կոն”ը թիւրիմացութեան արդիւնք է:  
“Մանգունը”, կամ “Մամգունը”, երկու  
մասի բաժանելով՝ մեր պատմիչը ստա-  
ցեւ է “Մամ(իկ) եւ Գուն (Կոն, Կո-  
նակ)”,:

Ղենթաբար նշանակում է Ճենացի  
Բակուր, Բակուր՝ Ճեն Տոհմից՝: Մեր պատ-  
միչների Բակուրը կարող էր Ճեն կոչուել  
այն պատճառով, որ նրա մայրը (ըստ  
Սեբէոսի) Ճեն Տոհմիցն էր:

Ճեները, յաղթուած լինելով, կարող  
էին իրենց երկրի փոխարէն ստանալ (հար-  
կաւ՝ ապատամբութիւնից առաջ) հետա-  
ւոր Կառնամը: Որ Պամիրը եւ շքակայ  
երկիրները Մամիկոնեաններին անձանօթ  
չէին, դորան ապացոյց՝ Վարզան, Վաչէ,  
Վահան անունները, որ այնքան յաճախ  
կրկնուում են նրանց մէջ:

Վաչու՝ անունն է մի գետի, որ  
սկիզբն է առնում Պամիրեան լեռների  
արեւելեան կողմից:

Վահանն է կոչուում այն լեռնաշղթան  
որ գնում է Մեծ Պամիրեան շղթայից  
դէպի փոքր Պամիրեանը: Մյուստեղն են  
գտնուում Վահան-Դարիա գետը եւ Վա-  
հան բերդը: Վահան նահանգը պատկանում  
է Աթղանիստանին:

Վարդան-Ջի կոչուում էր Պամիրի  
սահմանակից Սոգդիանայից մի քիչ դէպի  
հիւսիս գտնուող մեծ քաղաքն ու բերդը:

<sup>1</sup> Մանգուրների մասին՝ Հ. Աւագերեան «Երբմ  
въ Персид», 8:

<sup>2</sup> Մամիսոնը կամ Մամիսոնցի ցեղի մասին՝ Լինչ  
“Հայաստան”, Բ., 542 ըստ Բ. Ա. Ա. Քարգմ.:

<sup>3</sup> Օս-ն Մ-գուշիւրի մասին՝ Դ-ր Քիֆոֆէ  
„Материалы для истории осетинъ“ (“Сборн. свѣд. о набо-  
гоудах, в. V., стр. 7) Մամիսոնցիները, ըստ  
Պիֆոֆի, բնակում էին Լազիկայում եւ ունեցել են  
մի քանի բուխուում անունով (անդ.): Արդեօք Բուխ-  
լուում տեւեր կազ լուծի ծայքի Բուխ գետանի հետ:

Մ-գուշիւր լւմ Մ-գուշիւր չեղբէական մի բազ-  
մաթիւ (մոտ 2000 առն) ցեղ է, որ բնակում է Կու-  
րանեան շրջանում: Հեռ. Կովկասում (Двачковъ  
Гварасовъ стр. 238, «Изв. Кавк. Отд. Р. Г. О.»,  
т. XIV, 1901г.):

<sup>4</sup> Խոր, Բ., 81:

<sup>5</sup> Իֆաֆէ „Материалы“.

<sup>1</sup> Բակուր տիրոջն էր յինպոն Թագաւորների:  
Տես St. Martin „Mém. sur l'Arm.“, հաս. Բ.:

Պովկասում գոյութիւն է ունեցել մի քաղաք, որի անունը մինչև այժմ էլ անբացարեղի է քննարկել: Այդ անունը մի աւելորդ անգամ ապացուցում է Չինաստանի գաղթականների ներկայութիւնը Հայաստանում ու շրջակայ երկրների մէջ: Դա Խունանն է<sup>1</sup>, մի քաղաք, որ գտնւում է եղել Օրբէլեանների կառւածքներից ոչ հեռու, եւ նոյնիսկ գուցէ նրանց պատկանում էր: Չիններէն «Խունան», նշանակում է «ձորաքարերի երկիր» (ձորաքարերի անունը չինացիները տալիս էին հնչեկարիներին): Խունան կոչւում էր (եւ է) Չինաստանի այն նահանգը, որի մէջ բնակում էին հնչեկ արիները (մաները) եւ միայն նրանք էին, որ կարող էին Պովկաս բերել այդ տարօրինակ անունը, որ յիշատակ էր իրենց հայրենիքի:

Ըստ Սեբէոսի Մամբունը (Մամն ու Կոնակը) եղել է որդի «Կառնամայ նախարարին, որ էր երկրորդ ի թագաւորութեանն Ճնաստանի»: Ըստ իս՝ Կառնամ անձի անուն չէ, ինչպէս որ ընդունուած է կարծել, այլ նահանգի անուն: Հիները մի նախարարի մասին խօսելիս աւելի նշանակութիւն էին տալիս տոհմական (կամ այս անձին ստորագրեալ գաւառի) անունը քան անձնականին: Ուստի «Կառնամայ նախարար», ըստ իս պէտք է հասկանալ Պատմում ախարի նախարար: Կառնամը, հաւանականաբար, այն նահանգն է, որ

<sup>1</sup> Խունանը, ըստ Էսթրէի («Историческое обозначение», 163) գտնւում է եղել Չորոգեանի մէջ: Քարթլի-Յեթրեբլայից (էջ 21) երևում է որ Քարթլոսը շինել է առէլ մի բերդ Կուրի ափին, եւ այդ բերդին կից գոյացած քաղաքի անունը եղաւ Խունան: Ըստ արաբական մի պատմի՝ Խունանը հիմնուած է եղել Գ. Կարում (Ն. Քր.) Փառնաւաղ Վարդ թագաւորի ձեռքով: (Иосифъ Ибрагима «Города въ Грузіи», էջ 39-40): Յայտնի է որ Օրբէլեանք՝ Վրաստան գաղթ՝ ստացան մը փայն Օրբէլ, այլեւ՝ գաւառաբազմի եւ աւանս մեծամեծ եւ բերդաւոր (Օրբէլ, 1911 հրատ., էջ 371):

գտնւում էր Պամբիլից դէպի հիւսիս, Կառա եւ Ծամի գետերի միջեւ եւ պատկանում էր Չինաստանին: Դա այժմեան Փերգանի հովիտն է:

Դըրախայո-Ինն. Մամիկոնեանները սերունդ են Չինաստանում բնակող Հնդիկ արիների (Մաների) իշխանական հզօրագոյն մի հարստութեան՝ Օնն կոչուող Տան: Իրենց նահանգը կորցնելով՝ նրանք ստիպուած եղան հպատակուել Յին յաղթական հարստութեանը: Մակայն յարմար առիթից օգտուելով, Ճնները, ապստամբութեան դրօշ պարզեցին, բայց նորից յաղթուեցան եւ այս անգամ ստիպուեցան գնալ դէպի հեռու երկիրներ: Հայաստան եկան Պամբիլի եւ Պարթեւաստանի վրայով եւ սեղաւորուեցին Տայք նահանգի մէջ: Այս եղաւ ոչ ուշ քան Ա. դարը (Մ. Քր.): Տարծնը (աւելի ճիշտն ասած՝ նրա մի մասը), հաւանօրէն ձեռք բերին Գ. դարի վերջին թուերին, իսկ ապարապետութիւնը նրանց մէջ ժառանգական է եղել շատ վաղ ժամանակից, մեր դարերը մինչեւ էլ առաջ\*:

ԻՇԵՈ. ՄԴԻԸ. ԹՈՂԱՄԱՆԵԱՆ

\* Խորհիւ ուշադրութեան արժանի է նետաքորական եզրակացութիւն, որով գնացուցիչ հաւանականութիւն կ'ընդունի հայկական ասանդութիւնը Մամիկոնեանց ծագման մասին (ստ Քիւզաղայ, Անանուն-Սերոսի, Խորնաւոյ, Ջննոցայ են), եւ կալկասեան գաղթական ժողովորդը Նիւստամար Խորադոյն լուստորութիւններ կը տրուին: Արդէ տարրերը յառաջ (1908) քննատեղ եւ ցոյց տուած էր Խորսի եւ շրջակայից քաղաքներու, գետերու անունաց վրայ ծնական հետքեր, թէնի օրաթերթի մէջ (Չոտակ) ըլլալով թերեւս ուշադրութեան արժանացաւ: Հետաքրքրական է նա այն որ է դարուն (390—628ի մէջը) ծնացի պատգամաւորներն են ծանօթ կ'ընդունուին ի Տիւրքիս հայկական ասանդութեան՝ ծնական գուանները լսած՝ «Եւսնձ գոռուաք եւ ի մարտը» (ի ծնաց) աշխարհին յերգա իրնեանց (էջ 12): Անանունի (ըստ իս Վրթանան Էրտրոյի) այս եւ յաւերջ տողերը՝ յառաջ մերտուծ ծնն պատգամաւորներու քննէն, ունին աւելի նշանակալից քովակալութիւն, քան Փաստոսի մը կամ Խորնաւոյ տողերը յոյն սիւթի մասին:

Է. Ն. Ա.

